ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. հոկտեմբերի 24-ից 26-ը Տաջիկստանի Հանրապետություն (ք. Դուշանբե) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Արմեն Կոտոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Տաջիկստանի Հանրապետություն (ք. Դուշանբե)

24.10.2017-26.10.2017թ.

4. Հրավիրող կողմը՝

Տաջիկստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հակամենաշնորհային ծառայություն

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցել Տաջիկստանի Հանրապետության Դուշանբե քաղաքում կայանալիք Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) մասնակից-երկրների Սպառողների իրավունքների պաշտպանության խորհրդատվական խորհրդի 15-րդ նիստին:

6. Քննարկված թեմաները՝

Խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ԱՊՀ մասնակից-երկրներում Սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում տեղի ունեցած առավել նշանակալի իրադարձությունները: ԱՊՀ մասնակից-երկրների Սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակի բարձրացում, փոխգործակցության մեխանիզմների քննարկում, տեղեկատվության փոխանակում, օրենսդրության ներդաշնակեցում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման շրջանակներում քննարկվել են մի շարք հարցեր.

- ԱՊՀ մասնակից-երկրների Սպառողների իրավունքների պաշտպանության խորհրդատվական խորհրդի 14-րդ նիստի որոշումների կատարողականների քննարկում,

- Նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ԱՊՀ մասնակից-երկրներում սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված առավել կարևոր իրադարձությունների և դրանց ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,
- ԱՊՀ մասնակից-երկրների օրենսդրության խախտումներով ծառայություններ մատուցող և ապրանքներ իրացնող կայքերի արգելափակման իրավունք ունեցող՝ սպառողների իրավունքների պաշտպանության լիազոր մարմինների համագործակցության փորձառություն,
- Սպառողների իրավունքների պաշտպանության հարցերով քաղաքացիների դիմումների քննարկման աշխատանքների կազմակերպում,
- Խորհրդի՝ 2019-2020թթ աշխատանքային ծրագրի նախագծի մշակում,
- Հերթական՝ 16-րդ նիստի անցկացման վայրի, ժամկետները նշանակում, օրակարգի մշակում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման արդյունքում ընդունվել են որոշման նախագծեր՝ Խորհրդատվական խորհրդի 15-րդ նիստի օրակարգի հարցերի վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է.

- ԱՊՀ մասնակից-երկրների Սպառողների իրավունքների պաշտպանության խորհրդատվական խորհրդի 16-րդ նիստն անցկացնել Բելառուսի կամ Ուզբեկստանի հանրապետությունում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

30.10.2018թ.